

ՄԱՐԶՈՒՄ ՀԱԿԱՇԵՂԵՂԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի Նհ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.22-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետի 2013 թվականի մարտի 13-ի N 01/15/1226-13 ու Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2013 թվականի մարտի 14-ի 1/17.4/1989-19 գրությունները

կարգադրում էմ՝

1. Ջերմաստիճանի կտրուկ բարձրացման հետևանքով մարզում հակահեղեղային միջոցառումներ կազմակերպելու և իրականացնելու համար՝

1) մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Խլղաթյանին՝ սահմանել հերթապահություն մարզպետարանում՝ մարզպետարանի ստորաբաժանումների մասնագետների մասնակցությամբ.

2) մարզի համայնքների ղեկավարներին՝

ա) համայնքներում սահմանել շուրջօրյա հերթապահություն.

բ) սելավատարների, ափապաշտպան կառույցների և ջրամբարների տեխնիկական վիճակը ճշտելու համար համագործակցել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի հետ.

գ) համագործակցել մարզպետարանի և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության հետ՝ հեղեղումների կանխարգելման և անհրաժեշտության դեպքում փրկարարական աշխատանքներ իրականացնելու հարցում:

2. Մարզպետի տեղակալ Մ.Մանուկյանին՝ հակահեղեղային միջոցառումների իրականացման մասին պարբերաբար զեկուցել մարզպետին:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ Ժ/Պ՝

Ա. ՀԱԿՈՒՅԱՆ